4
650

10/2

ԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

# Ս. ՍԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Կ. ԵՊ.

28(7)
4-11

Էջմիածին
1912.

*Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ*

Հ8(Հ)
Կ-11

# Ս. ՍԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Ա. 14870
2882

Կ. ԵՊ.

Ս. Էջմիածին

*1912.*

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 թ.

Հրամանաւ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ամենայն Հայոց.

1473

ՀԱՅԱՍՏԱՆԻ Լ. ՍՍՀՄԻՆ. ԱԿԱԴ.
ԳՐԱԴԱՐԱՆ,
ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
Из-такстрин. Лер. ...

Ս. Տ. ԳԷՈՐԳԵՍ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ամենայն Հայոց.

# Ս. ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի ս. խաչի հետ՝ ամէնից նուիրական, խորհրդաւոր և սրտի մօտ սրբութիւնը հայ քրիստոնէի համար ս. Միւռոնն է։ Այլ և քրիստոնէական պաշտամունքի հետ կապ ունեցող ամէն մի իր և անձն այն ժամանակ է միայն սրբազան ընաւորութիւն ստանում նորա աչքում, երբ ս. Միւռոնի դրոշմը կայ վրան. նա խաչ է հանում երեսը եկեղեցու, ս. սեղանի, ս. աւազանի, սրբոց պատկերների առաջ, որովհետև ս. Միւռոնով նուիրագործուած են. համբուրում է եկեղեցւոյ պաշտօնեաների աջը, որովհետև օծեալ է. յարգում է իւր դաւանակցին, քանի Միւռոնի նշան է տեսնում սորա ճակատին. իսկ երբ սա հայ քրիստոնէին անվայել ընթացք է ցոյց տալիս, կընշանակէ՝ ճակատի Միւռոնը պակասել է, կամ խաչառ վերացել։ Կանաչ Միւռոնով կնքուած երդումը հայ քրիստոնէի ամենածանր երդումներից մէկն է. աւազանի ս. Միւռոնով կնքուած բարեկամութիւնը աւելի նուիրական է գրեթէ և աւելի հաստատուն, քան արենակցութեամբ ու խնամութեամբ եղածը։ Եւ որովհետև մի հատիկ կաթսայի մէջ, ս. Լուսաւորչից սերնդէ սերունդ ժա-

ռանգած օրհնութեամբ՝ նիւսող Միւռոնի կնիքն է, որ մկրտութեան աւազանից ի վեր որոշում է իւրաքանչիւր հայ անձի կոչումը մարդկութեան մէջ, այդ նոյն Միւռոնն է հանդիսանում ամենասերտ և ամէնից ամուր հոգևոր զօրը ի սփիւռս աշխարհի տարածուած բոլոր հայերի համար. Սրբալոյս Միւռոն, որ Աստուածային սրբութեամբ մաքրում է մեր մեղսամած մարմինները և ճանապարհ բանում մեր հոգու առաջ դէպի երկնային լուսոյ յաւիտենական կայանները։ Ի՜նչ զարմանք ուրեմն, որ երբ ս. Միւռոնի կաթսան դրուում է Երկնաւոր Ճարտարապետի հիմնած Միածնի Իջման Տաճարի սեղանի վրայ և ս. Լուսաւորչի յաջորդ ամենայն Հայոց ընդհանրական Հովուապետի օրհնութեան գիրը հրաւիրում է Լուսաւորչական հօտին՝ գիմել դէպի հանուրց Հայաստանեայց Մայր Աթոռը, ակամատեռ և ուռնակից լինելու այն մեծ խորհրդի կատարմանը, թէ ինչպէս ս. Միւռոնի նորոգ օրհնութեամբ ասեղծ ու անշէջ է պահուում, մեզ և յաջորդող սերունդների համար՝ մեր երջանիկ նախնեաց սրբութեան և լուսոյ բաղմադարեան ժառանգութիւնը,— ի մի է ժողովուում ս. Աթոռի շուրջ բաղմուստեք հայութեան այնպիսի հարուստ ներկայացուցչութիւն և տեղի ունենում այնպիսի մեծաշուք հոգեպարար հանդէս, որի նմանը չկայ հայ մարդու համար ուրիշ ոչ մի տեղ և ոչ մի այլ առթիւ։

Ահա այս ուխտաւոր բաղմութեանը, և հեռուից հոգւով մասնակցողներին ու հետաքրքրուող-

ներին՝ կկամենայինք մի քանի պատմական և նկարագրական տեղեկութիւններ տալ միւռոնօրհնութեան հանդիսի և նորա առարկայ եղող սրբութեան մասին։

---

«Միւռոն» բառը ծագում է յունարէն լեզուից, ուր նշանակում է՝ հեղուկ, բոյսից հոսող հիւթ. բայց գործ է ածուում յատկապէս ձիթենու պտղի հիւթի կամ իւղի այն տեսակի համար, որ զանգուած է անուշահոտ համեմունքներով։ Ձիթենու իւղն իբրև օծանելի շատ հին ժամանակներից գործածելի է եղել Եբրայեցիների, ինչպէս և ուրիշ արևելեան ազգերի, Յոյների և Հռոմայեցիների մէջ՝ իբրև կաշին ճկուն պահելու և արևի տապից պաշտպանելու միջոց։ Մարմնի օծումը տեղի էր ունենում լուացումներից յետոյ, սովորաբար երբ զարդարուում էին (Հռութ 3, 3) կամ ուրախական և տօնական հանդիսի համար պատրաստուում (Սաղմոս 22, 5. Ամոս 6, 6). մինչդեռ արտաքին օրերում, իբրև սգոյ նշան, օծումից բոլորովին հրաժարուում էին (Բ. Թագ. 14, 2. 12, 20). և դեռ Քրիստոսի ժամանակ սովորութիւն էր ճեռքով հիւրին պատուել գլուխը իւղով օծելով, իսկ արտաքոյ կարգի պատուի նշան էր ոտքերը թանկագին իւղով օծելը (Մարկ. 14, 3. Յովհ. 12, 3)։ Ձիթենու պարզ իւղի տեղ արդէն հին Իսրայելացիների մէջ շատ դէպքերում՝ հարկաւ աւելի ունեորների ու իշխանների մօտ, սովորութիւն է եղել գործածել թանկագին

խնկեղէնի ու համեմունքի խառնմամբ առանձնապէս պատրաստածը (Ելք 30, 23 շ.). դորա համար էլ այդ խնկեղէնն ու համեմունքը շատ գնահատում էին և ամենթանկագին իրերի շարքում հաշուում (Եսայի 39. 2. Գ. Թագ. 10, 10 Եզ. 27, 22). իսկ ամէնից թանկագին օծանելիքը նարդոսի իւղն էր (Երգք 1, 12. Մարկ. 14, 3)։

Սակայն արդէն Հին Ուխտի մէջ շատ նախնական ժամանակներից ի վեր օծումն ունէր նաև մասնակի՝ նուիրագործող նշանակութիւն, և ինչպէս առարկաներ, այնպէս և անձինք, որոնք նուիրուած էին Իսրայէլի Աստուծոյ սպասին, կամ որոնց վրայ փայլում էր Աստուածային զօրութեան ներկայութիւնը՝ օծուած էին լինում ձիթենու իւղով։ Այդպէս Յակոբ օծեց իւր գլխի տակի քարն այնտեղ, ուր հրաշալի տեսլեան մէջ Աստուած երևացել էր նրան (Ծննդ. 28, 16—19). օծուած էր նաև Մովսէսի վկայութեան խորանը իւր բոլոր կահաւորութեամբ, սրբութեանց սեղանով և աւազանով մէկտեղ (Ելք Խ. 9—11)։ Նոյն խորանին և սեղանին սպասաւորող քահանան մանաւանդ, որի ամբողջ կեանքը նուիրուած պէտք է լինէր Աստուծոյ պաշտամանը, օծմամբ էր ընդունում իւր սուրբ կոչումը (Ելք Խ. 13—15. ԻԹ. 7 9)։ Օծմամբ էին իշխանութիւն ստանում նաև Իսրայէլի բոլոր թագաւորները, որոնք Աստուծոյ հոգւով լցուած՝ Աստուծոյ անունով, զօրութեամբ և օրինօք պիտի դատէին ու առաջնորդէին Աստուծոյ ժողովրդեան, պաշտպանէին արտաքին յարձակումներից (Ա. Թագ. 10, 1. 16,

13. ևն.)։ Մինչև իսկ այն դէպքում, երբ մի օտար իշխան ներկայանում էր իբրև Իսրայէլի Աստուծոյ կամակատարը, Նորա այս և այն վճիռն իրագործողը երկրի վրայ՝ դարձեալ Տիրոջ օծեալն էր կոչուում և երբեմն իրօք օծումն ընդունում (Գ. Թագ. 19, 15. Եսայի 45, 1)։ Այդպիսի արտաքոյ կարգի դէպքերում, երբ Իսրայելացի կամ օտար մի կողմնակի անձն հրաւիրուում էր Իսրայէլի ժողովրդեան վրայ թագաւորական իշխանութիւն ստանձնելու և Աստուծոյ անօրէնութիւններն ի կատար ածելու՝ Աստուծոյ կողմից թարգման հանդիսանում էին և օծում կատարում մարգարէները, որոնք, իբրև անմիջապէս Աստուծուց ընտրուած և ուղարկուած, Նորա հոգւոյ ներքին ազդմամբ խօսող մարդիկ՝ պէտք չունէին արտաքուստ իւղով օծուած լինելու. բայց պատահում են մարգարէներ, որ օծմամբ ուրիշ մարգարէից ստանում են մարգարէական շնորհը (Գ. Թագ. 19, 16)։ Այսպիսով ս. Գրքում ամէն անգամ օծման իւղը նկատուում է իբրև այն նիւթեղէն միջնորդը, որ Աստուածային ոգին և շնորհը ներգործական է դարձնում մարդոց մէջ և իրերի վրայ։

Իսկ երբ պէտք է դար աշխարհի Փրկիչը, որ ոչ միայն լի էր Հոգւով և զօրութեամբ Աստուծոյ, այլ պատկեր իսկ անհերևութին Աստուծոյ (Բ. Կորնթ. 4, 4), որ և քահանայ էր ու քահանայապետ՝ ըստ կարգին Մելքիսեդեկի (Եբր. 6, 20), և մարգարէ և թագաւոր յաւիտենից, որի իւրաքանչիւր խօսքը և գործը և շարժուածքը Աստ-

ուածային էր,—հասկանալի է, թէ ինչու նորա գալստեան ակնկալողները և աւետողները սկզբից և եթ նկատում էին նորան իբրև բացարձակ Օծեալ Տեառն (Ղուկ. 2, 11. 26)։ Այս պատճառով Քրիստոս բառը, որ օծեալ է նշանակում և որ յունարէն լեզուով թարգմանութիւն է Փրկչի ժամանակակիցների ակնկալութիւններն իր մէջ ամփոփող «Մեսիա» եբրայեցերէն—արամերէն բառի, մեաց կապուած փրկչական Յիսուս անուան հետ, իբրև նորա կոչուած ամէնից աւելի բնորոշ կերպով արտայայտող մակդիր։ Ինքը Փրկիչը, երբ իւր քարոզութիւնն սկսելուց յետոյ առաջին անգամ Նազարէթի ժողովարանը մտաւ և Եսայեայ մարգարէութեան գիրքը բանալով՝ կարդաց այն տեղն, ուր ասուած էր. «Աստուծոյ Հոգին ինձ վերայ է, որովհետև նա ինձ օծեց, որպէս զի խեղճերին ուրախութեան լուր բերեմ, ես.» (Ղուկ. 4, 18)—ընդունեց այդ խօսքերն իբրև կանխասացութիւն իւր մասին, հետևաբար և իրաւունք տուաւ իրեն Օծեալ անուանելու, ինչպէս և անուանում է Պետրոս առաքեալը՝ կենդանի հաւատոյ իւր առաջին խոստովանութեան մէջ (Մատթ. 16, 16.)։ Այս օրինակով նաև Քրիստոսի հաւատացեալները, որոնք նկատուում են իբրև Աստուծոյ նուիրուած մի նոր սուրբ ժողովուրդ և ընդհանուր քահանայութիւն (Ա. Պետր. 2, 9), որոնց համար արդէն Յովհաննէս Մկրտիչը գուշակել էր, թէ Հոգւով Սրբով պէտք է մկրտուեն (Ղուկ. 3, 16),—այդ մկրտութեան հետ նաև օծութիւն ընդունած էին համարուում և այդ օծմամբը

ճշմարիտ ու կատարեալ աստուածածանութիւն տուեցած (Ա. Յովհ. 2, 20 27. Բ. Կորնթ. 1, 21. 22)։

Արդ, ինչպէս Փրկիչն ինքը, ի Հոգւոյն Սրբոյ ծնեալ լինելով՝ օծեալ էր անդստին, այնպէս և նորա անմիջական աշակերտները՝ նորանից ս. Հոգի և հոգևոր օծութիւն ընդունելով (Յովհ. 20, 22, 23), իւղոյ օծման պէտք չունէին այլ ևս։ Քանի որ սակայն արդէն Քրիստոսի առաքեալների օրերում դէպքեր էին պատահում, երբ ս. Հոգին բաշխուում էր անկախ ջրով մկրտութիւնից (Գործք 8, 14—17. 19, 1—6), ամենայն հաւանականութեամբ շատ վաղ ժամանակ հաւատացեալների համայնքի մէջ սովորութիւն մտաւ մկրտեալներին իւղով օծել կամ դրոշմել՝ իբրև ս. Հոգին ընդունելու և նոր մարդ լինելու նշան, ինչպէս որ ջրով մկրտութիւնը մեղքից սրբուելու և հին մարդու թուլութիւններից հրաժարուելու նշան էր. և առաքելական թղթերից վերև առաջ բերած վկայութիւնները, ուր յիշուում է հաւատացեալների օծման մասին, իբրև ակնարկութիւն կարող են համարուել, որ այդ սովորութիւնն իրօք եղել է։ Այսպիսով՝ օծման համար սրբազան իւղ գործածելու կարիքը քրիստոնէական եկեղեցւոյ մէջ յառաջ է եկել որոշմի խորհրդի հաստատութիւնից, որ իբրև մկրտութեան խորհրդի անհրաժեշտ տարրը՝ եկեղեցւոյ գլխաւոր խորհուրդներից մէկն է, հաւատացեալի վերածնութեան և երկնաւոր կոչման արտայայտիչ նշանը։ Բայց Հայոց եկեղեցին սրբազան իւղը գործ է ածում ոչ միայն

դրոշմի համար, այլ նաև եկեղեցական բարձր կարգի պաշտոնեաների ձեռնադրութեան միջոցին։ Քրիստոսի առաքեալները, ինչպէս որ նոր հաւատացեալների գլխին ձեռք դնելով և աղօթելով էին նոցա ս. Հոգւոյ շնորհը բաշխում, այդպէս և ձեռք էին դնում և աղօթում, երբ հարկաւոր էր համայնքի այս կամ այն անդամին որոշ պաշտօն տալ (Գործք. 6, 6. 13, 3), երբէց կամ եպիսկոպոս կարգել (Ա. Տիմ. 4, 14. Բ. Տիմ. 1, 5)։ Օրթոդոքս եկեղեցին և մեր հարևան ուրիշ արևելեան եկեղեցիներ՝ Ասորիներ, Կոպտեր ևն. բոլոր եկեղեցական պաշտօնները բաշխում են պարզ ձեռնադրութեամբ և աղօթքով. միայն Հռովմէական եկեղեցւոյ մէջ օծում են քահանաների և եպիսկոպոսների ձեռները. այլ և Օրթոդոքս եկեղեցիները օծում են թագաւորներին՝ նկատելով նոցա, Հին Ուխտի թագաւորների նման, իբրև Աստուծոյ օծեալ և Աստուծոյ օրէնքն ու իշխանութիւնը երկրի վրայ կատարող։ Իսկ մեր եկեղեցւոյ մէջ միայն քահանայութիւնից ցած աստիճաններն են պարզ ձեռնադրութեամբ շնորհուում, այլ և կրօնաւորութիւնն ու վարդապետական աստիճանները. մինչդեռ քահանայի ձեռնադրութեան միջոցին օծում են թէ ճակատը և թէ ձեռները, իբրև սրբազնագործ պաշտօնեայի, որ անմահ պատարագ է մատուցանում. ինչպէս օծուում էին Հին Ուխտի քահանաները, որոնք զոհ էին մատուցանում. առանձնապէս օծուում է նաև եպիսկոպոսը, որ յաջորդ է առաքեալների, հովուում է Քրիստոսի հօտը և ձեռնադրութեան

շնորհը բաշխում. ինչպէս օծուում էին Հին Ուխտի քահանայապետները, որոնք յաջորդ էին Ահարոնի, ձեռնադրում էին քահանաներին և, Բաբելոնի գերութիւնից յետոյ, առաջնորդում էին ժողովրդեան։ Միայն մեր եկեղեցուն յատուկ է նաև Հայրապետի օծումը, որ տեղի է ունենում ս. Միւռոնը գաղթի վերայ կաթեցնելով՝ իբրև ընդհանրական գլխոյ եկեղեցւոյ և Փրկչի փոխանորդութեամբ նորա հօտի միութիւնը պահպանողի։ Թագաւորների օծումը նոյնպէս, գոնէ Բագրատունիների ժամանակից՝ մեր մէջ եղել է, և մեր մայր Մաշտոցում առանձին կարգ կայ դորա համար։

Սրբազան իւղը կամ Միւռոնը գործ է ածւում մեր եկեղեցւոյ մէջ վերջապէս եկեղեցի, և ի մասնաւորի սեղանի վէմքարն ու աւազանը, խաչ ու պատկերներ օծելու համար. այլ և ջրօրհնեաց հանդիսի միջոցին, երբ ս. Միւռոնը կաթեցուում է Յորդանանը փոխարինող աւազանի մէջ, ի յիշատակ ս. Հոգւոյ Փրկչի վերայ իջնելու՝ մկրտութեան միջոցին։ Առանձնապէս խաչը օծելու մասին վէճ է եղել միջին դարերում մեր և Ասորիների մէջ, որոնք ի թիւս այլոց պախարակում էին Հայոց այդ սովորութիւնը, և մեր Գէորգ փիլիսոփայ կաթուղիկոսը *) Հայոց սովորութիւնը պաշտպանելով Ասորւոց պատրիարքին գրած թղթի մէջ **), հարցնում է. ինչու՞ պէտք է քեզ անարժան

*) 1058—1059 թ.-ներին. տես. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ. Ե. վ. Տէր Մինասեան. ս Էջմիածին. 1908. եր. 209։

**) Գիրք Թղթոց. Թիֆլիս. 1901. եր. 345։

թուի խաչի վերայ Միւռոն ձգելը՝ քանի որ ինքը Քրիստոս խաչի վերայ բեռուեցաւ։ Այդպէս և Ներսէս Շնորհալին Ամայք գաւառի ասորիներին գրած թղթի մէջ*) բացատրում է, թէ որչափ պատշաճ է հասարակ նիւթից շինած խաչը ս. Միւռոնով օծել, որպէս զի ս. Հոգւոյ զօրութիւնը ստանայ, ինչպէս Փրկիչը պատշաճ համարեց, որ ս. Հոգին Յորդանանում իջնէ իւր վերայ։ Այս խօսքերից պարզ է արդէն, թէ ինչ նշանակութիւն էին տալիս մեր հայրերը ս. Միւռոնի օծմանը ընդհանրապէս։

Սրբազան իւղն՝ ունենալով այսպէս աւելի ընդարձակ գործադրութիւն մեր եկեղեցւոյ մէջ, քան ուրիշ եկեղեցիներում, ստացել է նաև բացառիկ խորհրդաւոր, ընդհանրացած ժողովրդական նշանակութիւն։ Դորան շատ նպաստել է, անշուշտ, այն հանգամանքը, որ այլակրօն և այլադաւան ազգերով շրջապատուած՝ Հայերն աշխատել են իրենց ինքնուրոյնութիւնը պահպանելու համար պարզ և ընորոշ խաչը դնել իրենց և օտարների մէջ, ուստի ինչպէս Հրէաները մեծ կարևորութիւն էին տալիս թլփատութեան նշանին, որով տարբերուում էին իրենց շրջապատող անթլփատներից, այդպէս և մեզ համար առանձին կարևորութիւն է ստացել ս. Միւռոնի դրոշմը, որով ս. Լուսաւորչի հօտը տարբերուում էր անհաւատներից, ու նոյն իսկ այլադաւաններից, որով դրոշմուած էին ազգային եկեղեցւոյ բոլոր սըր-

*) Թուղթ Ընդհանրական. Ս. Էջմիածին, 1865. եր. 376։

բութիւնները։ Այս գաղափարը արտայայտութիւն է գտնում նաև այն գեղեցիկ աւանդութեան մէջ, թէ այժմ մեր եկեղեցւոյ գործածած ս. Միւռոնի օրհնութիւնը սկիզբն է առնում ս. Լուսաւորչից, և ամէն անգամ, երբ նոր Միւռոն օրհնելու համար հին Միւռոն ենք խառնում՝ հետն անցնում է ս. Լուսաւորչի օրհնած Միւռոնի խմորը։ Թէպէտ կայ նաև աւանդութիւն, որ Հայաստանի առաջին լուսաւորիչ ս. Թադէոսն արդէն Քրիստի օրհնած իւղ բերել էր հետը Պաղեստինից*), բայց բուն ազգային, աւելի ընդհանրացած և նշանակալից աւանդութիւն ս. Գրիգոր Լուսաւորչի մասին եղածն է։

Մենք չունինք ի հարկէ պատմական տեղեկութիւններ այն մասին, թէ ս. Լուսաւորիչ ե՞րբ և ի՞նչպէս է օրհնել ս. Միւռոնը, թէ նորանից առաջ և յետոյ ինչպէ՞ս է ս. Միւռոն պատրաստուել և գործածուել։ բայց մեր ձեռքը հասել է մի հին յիշատակարան, որ բաւական լոյս է սփռում այս տեսակէտից ս. Լուսաւորչին շատ մօտ ժամանակի վրայ։ Ս. Լուսաւորչի որդի և երկրորդ յաջորդ ս. Վրթանէսի ժամանակակից Երուսաղէմի Մակար արքեպիսկոպոսը ս. Վրթանէսին գրած թղթի մէջ**) յայտնում է, որ նորա թուղթն իրեն բերող հայ քահանաներից տեղեկացել է, թէ ինչպէս Հայերի մէջ շատ տեղ եկեղեցական մի քանի կարգեր ըստ պատշաճին չեն

*) Տես Հ. Յ. Տաշեան.—Ցուցակ հայերէն ձեռագրաց. Վիեննա. 1895 եր. 559.

**) Գիրք Թղթոց. 407 շ.

կատարուում. ուստի պարտք է համարում ցոյց տալ, թէ ընդհանրական եկեղեցւոյ մէջ ընդունուած կարգերը որոնք են և ինչպէս պէտք է կատարուին։ Այստեղ իմիջի այլոց «սրբութեան իւղի» համար ասում է, որ եպիսկոպոսապետը պէտք է օրհնէ, և միայն բացառիկ դէպքերում եպիսկոպոսապետի հրամանով երկու կամ երեք եպիսկոպոս միացած կարող են օրհնել. իսկ հասարակ իւղը, որ գործ է ածուում հիւանդների կամ մոռեալների համար, այլ և մկրտութեան միջոցին՝ բուն օծման կարգից առաջ, կարող են քահանաներն ու առանձին եպիսկոպոսներ օրհնել։ Այս կարգը, որի համար Երուսաղէմի արքեպիսկոպոսը քիչ յետոյ աւելացնում է, թէ սուրբ հայրերից աւանդած էր, ըստ երևութին երկար ժամանակ գրեթէ նոյնութեամբ պահուում էր մեր մէջ։ Գոնէ Յովհան Օձնեցին, Ը. դարի սկզբում, իւր ժամանակին տեղի ունեցող ինչ ինչ գեղծումների դէմ կանոններ հաստատելով և շեշտելով այստեղ, թէ «սուրբ Միւռոնը, այսինքն անուշահոտութեան իւղը» Հայրապետը պէտք է օրհնէ, կարծես թէ թոյլ է տալիս, որ եպիսկոպոսներն էլ օրհնեն՝ տարին մի անգամ, աւագ հինգշաբթի օրը. իսկ քահանաները նոցանից առնելով՝ օծեն սեղան, եկեղեցի և խաչ, և մկրտութիւնից յետոյ դրոշմը տան։ Իսկ դրոշմից առաջ գործածուող մկրտութեան ձէթը քահանան պէտք է օրհնէ՝ այնչափ միայն, որչափը կարևոր է միանգամայ գործածութեան համար*)։ Պէտք է նկատել, որ ուրիշ եկեղեցիներում՝ բացի դրոշմի և օծման համար գործածուող ս. Միւռոնից, մինչև այժմ կայ քահանայի օրհնած հասարակ ձէթի գործածութիւնը՝

---

*) Յովհաննու Իմաստասէրի՝ Մատենագրութիւնք. Վենետիկ. 1834. եր. 60.

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



«օծումն հիւանդաց» կարգը կատարելին, որ մեր եկեղեցին չունի, [illegible]։ Հռոմէական եկեղեցու մէջ քահանան դրոշմ տալու իրաւունքից զուրկ է. նա մկրտում է երեխային ջրով և օծում իւր օրհնած ձէթով. բայց բուն դրոշմը կարող է տալ միայն եպիսկոպոսը, որ մի քանի տարին մի անգամ շրջում է իւր թեմը և այդ ժամանակամիջոցում մկրտուած բոլոր երեխաներին դրոշմ տալիս՝ ս. Միւռոնով, որ ամէն եպիսկոպոս օրհնելու իրաւունք ունի։ Մեր եկեղեցու մէջ քահանայի ձէթ օրհնելու սովորութիւնը և բացի ս. Միւռոնից ուրիշ որ և է օրհնած ձէթի գործածութիւն վաղուց վերացել է։ Բայց այս նկատմամբ թէ ս. Լուսաւորչի անմիջական յաջորդների և թէ Յովհան Օձնեցու ժամանակ եղած զեղծումներն ու թիւրիմացութիւնները ցոյց են տալիս, որ առաջ էլ դժուար թէ ընդհանուր ընդունուած սովորութիւն լինէր այդ։ Նոյնպէս և եպիսկոպոսների Միւռոն օրհնելը հազիւ թէ երբ և իցէ յաճախ տեղի ունեցած լինի և ամէնքի համար յարգելի կարգ եղած. այլ այն շրջանում, երբ դաւանական խորութիւն չկար մեր և օտար եկեղեցիների մէջ, կամ երբ, ինչպէս Օձնեցու անմիջական մի շարք նախորդների օրով՝ հայութեան ընդարձակ հատուածներ յունական տիրապետութեան ներքոյ էին գտնուում, օտարներից վերցրած այդպիսի սովորութիւններ կարող էին մուտք գործած լինել մի քանի դաւառներ։ Իսկ մեր հայրապետներն առհասարակ ներողամիտ էին վերաբերուում այսպիսի [illegible] հինգական կէտերի

հետ կապ չունէին։ Յայտնի է սակայն, որ մեզանում, հայրապետական իշխանութիւնն սկզբից և եթ այնպիսի կենտրոնացնող ոյժ ունէր և մանաւանդ քաղաքական իշխանութեան անկումից յետոյ այնպիսի հեղինակութիւն ստացաւ ամբողջ ազգութեան աչքում, որ ս. Միւռոնի մէջ մարմնացող շնորհաբաշխութեան իրաւունքը՝ իբրև հոգևոր կոչման բարձրագոյն արտօնութիւն, ըստ ինքեան պէտք է կենտրոնանար յանձին Հայրապետի։ Որ այդ կենտրոնացումը Օձնեցուց շատ առաջ արդէն տեղի էր ունեցել, երևում է նոյն իսկ նորա հաստատած կանոնից. ապա թէ ոչ, եթէ եպիսկոպոսները կաթուղիկոսի հաւասար իրաւունք են ունեցել, եթէ այստեղ բուն բնագրի բառերի և դասաւորման փոքրիկ փոփոխութիւն չի կատարուել, կամ բացառութիւնների մասին չէ խօսքը, ինչ հարկ կայ սկզբից և եթ շեշտելու. «Պարտ և արժան է զսուրբ Միւռոնն, այսինքն զիւղն անուշահոտութեան, հայրապետին օրհնել»։ Գոնէ Օձնեցուց մի դար առաջ կատարուած ս. Միւռոնի օրհնութեան մեզ յայտնի ամենահին նկարագրից տեսնում ենք, որ բացառիկ դեր կատարողն այստեղ հայրապետն է, և թոյլ չի տրուում ամենևին մտածել, թէ ամեն մի եպիսկոպոս, կամ եպիսկոպոսների մի խումբ կարող էր Միւռոն օրհնել։

Այդ միւռոնօրհնութիւնը կատարուել է մեր եկեղեցւոյ պատմութեան ամենանշանաւոր օրերից մէկում, որով և առանձնապէս խորհրդաւոր նշանակութիւն է ստանում։ Ս. Գրի-

զոր Լուսաւորչի · քարոզութեամբ կազմակեր-
պուած եկեղեցին շատ ծանր օրեր էր անցնում
Է. դարի սկզբին. առաջին անգամ նորա մէջ մեծ
պառակտում էր յառաջացել և խոշոր հատուած-
ներ նորանից բաժանուելու վրայ էին։ 80 տարի
առաջ Բիւզանդական կայսրները, Բաղկեդոնի ժո-
ղովի ուսմունքը պաշտօնական դաւանութիւն
դարձնելով իրենց պետութեան սահմաններում՝
շարունակ աշխատել էին նոյն դաւանութիւնն ըն-
դունել տալ նաև այս ինքնուրոյն եկեղեցական կազ-
մակերպութեանը, որ ամուր պահելով նախնեաց
հաստատած դաւանանքը՝ խորթացել էր կարծես
քրիստոնեայ արևմուտքից և աւելի յօժարու-
թեամբ էր հպատակուում հեթանոս արևելեան
պետութեան. բայց չէին յաջողել։ Նոցանից վեր-
ջինը սակայն՝ Մօրիկ զօրեղ և իւր նպատակին
հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն
չդնող կայսրը, յոյսը կտրած ամբողջը միատեղ
գրաւելուց և օգտուելով արևելքում իւր ժամա-
նակաւորապէս ձեռք բերած մեծ ազդեցութիւնից
և իշխանութիւնից, յաջողել էր Զ. դարի վերջին
պառակտում ձգել այս եկեղեցու մէջ և սպառնում
էր մեծ մեծ հատուածներ խլել նորանից։ Զլա-
տելու համար ընդհանրական հայրապետի իշխա-
նութիւնն ու հեղինակութիւնը, իւր ձեռն անցած
հայկական նահանգներում նա առանձին հակա-
թոռ կաթուղիկոս էր հաստատել տուել Յովհան
Սանեցուն, օրինական Մովսէս Եղուարդեցի
հայրապետին թողնելով միայն Պարսից իշխա-
նութեան ներքոյ գտնուող մասերը։ Ապա գրա-

ւել էր Վրաց կաթուղիկոս Կիւրիոնին, և սա աւելի ու աւելի համարձակ կերպով տարածում էր Քաղկեդոնի ուսմունքը Վրաց եկեղեցւոյ սահմաններում, որ մինչ այդ դաւանական, վարչական, ծիսական և այլ ամէն տեսակէտներով Հայոց եկեղեցու ենթակայ անբաժան կրտսեր քոյրն էր եղել։ Աղուանից եկեղեցին ևս, որ նոյն յարաբերութեան մէջ էր Հայոց եկեղեցու հետ, ժամանակաւորապէս, ինչ ինչ արտաքին հանգամանքների պատճառաւ՝ կտրել էր սորանից հոգևոր հաղորդակցութիւնը և դարձեալ դէպի քաղկեդոնականութիւն հակամետութեան նշաններ էր ցոյց տալիս։ Այսպիսի պայմաններում, Մօրիկ կայսեր հետ գրեթէ միաժամանակ, վախճանել էր Մովսէս Եղուարդեցին և հայրապետական աթոռը մի քանի տարի թափուր էր մնացել, որ քիչ չէր նպաստել եկեղեցական կազմի խախտուելուն, և ահա Պարսից պետութեան մէջ մեծ պատուի և իշխանութեան հասած հայ նախարարներից մէկը՝ Սմբատ Բագրատունի Վրկանայ մարզպանը, ժողովում է նախնեաց աւանդին հաւատարիմ մնացած եպիսկոպոսներին և ազգի մեծամեծներին ու նոր կաթուղիկոս ընտրել տալիս։ Երբ նորընտիր հայրապետը՝ Աբրահամ Աղբաթանեցին, օծումն ընդունեց և հայրենի հաւատոյ սահմանում հաւատարիմ մնալու գիր առաւ բոլոր ներկայ եղող այն եպիսկոպոսներից և հոգևորականներից, որոնք առժամանակ ենթարկուել էին յունական ազդեցութեան, ջլատուած, ճղակոտոր եղած և նորից ի մի ձուլուած հօտի առաջնորդները կարիք զգա-

ցին իրենց միութեան ուխտը կնքել պատշաճաւոր հանդիսով, և նոցա խնդրանօք նոր հայրապետը ս. Միւռոն օրհնեց՝ ոգևորիչ փառաւորութեամբ։ Այս հանդիսի նկարագրութեան մէջ*) ասուած է՝ ա) որ Մովսէս կաթուղիկոսի մահից յետոյ Միւռոն չէր օրհնուել, և Վրթանէս վարդապետի տեղապահութեան ժամանակ հանդուցեալ կաթուղիկոսի օրհնած Միւռոնն էր բաժանուել եկեղեցիներին. ուրեմն Միւռոն օրհնելը վերապահուած էր կաթուղիկոսին, եպիսկոպոսները չէին օրհնում. բ) որ ս. Միւռոն օրհնելուց յետոյ հայրապետը միւս օրը բաժանեց բոլոր ներկայ եղողներին, և նոքա ուրախ ուրախ ցրուեցին իրենց տեղերը. այստեղից հաւանական է երևում, որ Օձնեցու կանոնն էլ այնպէս պէտք է կարդալ, թէ հայրապետը ս. Միւռոն օրհնում էր, իսկ եպիսկոպոսներն ու քահանաները տարին մի անանգամ նորանից ստանում և գործադրում էին. գ) որ Վրթանէս տեղապահը «իւղագործաց արուեստի» համաձայն արդէն նախօրօք պատրաստել էր «օծութեան իւղը». մնում էր ամբողջ գիշերը հսկում և պաշտօն կատարել և ամբողջ ցերեկն էլ բուն օրհնութեան խորհրդի վերայ տքնել, մինչև գլուխ եկաւ ամէն ինչ. ուրեմն ըստ էականին ս. Միւռոնը, գոնէ է. դարու սկզբին՝ նոյն կազմութիւնն ունէր և նոյն ձևով էր օրհնուում, ինչ որ այսօր։

---

*) Ուխտանէս եպիսկոպոս՝ Պատմութիւն հայոց. Վաղարշապատ, 1881. եր. 67.

Իսկ թէ յաջորդ դարերում արդէն ինչ անփոխարինելի սրբութիւն էր ս. Միւռոնը հայ քրիստոնէի աչքում՝ դրան վկայ Ժ. դարու մեծ օրհներգակ Գրիգոր Նարեկացին, որ իւր յայտնի աղօթագրքի վերջին խօսքը նուիրել է «սրբալոյս իւղոյն Միւռոնի» երկարաշունչ օրհնարանութեան։ Ս. Գրքից վերցրած բազմաթիւ վկայութիւններով և իւղի աշխարհօրէն գործածութեան օգտաւէտ կողմերն օրինակ առնելով՝ որչափ և «թարգմանօրէն» (Դիոնեսիոս Արիոպագացուց), բայց զարձեալ իրեն յատուկ ճոխ պատկերաւորութեամբ, նա մի առ մի նկարագրում է սրբազան իւղով նուիրագործման բազմազան արդիւնքներն անցեալում և քրիստոնէի անձի վերայ։ Այս զարմանահրաշ լուսոյ օրհնութեան իւղը, Քրիստոսի անուամբ և ս. Հոգւոյ շնորհօք կնքելով՝ զանազանատեսակ ազգերի բերում իրար է խառնում և դարձնում մի քրիստոսեան ժողովուրդ, նոյն երկնաւոր Հօր հարազատ որդիներ։ Ինչպէս որ Հին Ուխտի մէջ որոշուած էր զոհի իւղային մասերը կերակրի համար չգործածել, այլ Աստուածութեան նուիրել, իբրև ճենճեր զոհացողական, այսպէս և Նոր Ուխտի մէջ օրհնութեան իւղը հանդիսանում է իբրև զօրութիւն Տեառն մատչելի, որ մեր հոգուն ճանապարհ է տալիս՝ դէպի երկնային կայանները վերանալու և Արարչին ձոնուելու։ Ինչպէս ճրագի իւղը լոյս է արտադրում և մեր շուրջը լուսաւորում, այնպէս և սրբալոյս Միւռոնը հոգևոր լուսաւորութեան միջնորդ է մեզ համար։ Ինչպէս որ

իւղով թաթախուած պատրոյդը վառուում է և հուր արձակում, երբ կրակ են մօտեցնում նրան, այնպէս և մենք հանդերձեալ կեանքում հանդէս պիտի գանք հրեղէն ընութեամբ, երբ երկնային կայծը մեզ դիպչի։ Ինչպէս իւղը հեշտ կերպով միանում է մարմնի հետ և ջրով չի լուացուում. այնպէս և ս. Միւռոնը մեզ հետ անքակտելի կերպով միացնում է ս Հոգւոյ զօրութիւնը։ Ինչպէս իւղը թափանցիկ է դարձնում մարմինները լուսոյ համար, այնպէս և ս. Միւռոնը մեզ՝ աստուածային ազդեցութեանց համար։ Ինչպէս ըմբիշները իւղով օծում են մարմինները՝ հակառակորդից պաշտպանուելու, այնպէս և ս. իւղը մեզ պաշտպանում է չարի զօրութիւնից։ Ինչպէս իւղը փայտէ ամաններն է ամրացնում, այնպէս և ս. Միւռոնը մեր հոգւոյ մարմնեղէն անօթը։ Ինչպէս իւղով բժշկութիւն են կատարում և ՀԷաստակար մժեղներ ոչնչացնում, այդպէս և ս. իւղը բժշկարար է մեր հոգու համար և չարի ներգործութիւնները ոչընչացնող։ Այլ և ծաղիկներով ու անուշահոտ խնկեղէնով համեմուած իւղից ս Միւռոն կազմելը մի ստուերական օրինակ է աստուածային անճառ և անհամեմատելի բաղմադիմի անուշութեան։ Ըստ այսմ՝ Նարեկացին կնքում է իւր օրհնաբանութիւնը մի սրտաբուխ աղօթքով. որ ս. իւղոյ օծմամբ վառեալներին ջուրը չողողէ, հուրը չայրէ, ատնութիւնը չցրտացնէ, ՀԷաստակար հողմը չհանդցնէ, որ և պղծութիւն չաղտեղէ, և այլն։

Յաջորդ ԺԱ. դարում, Բագրատունեաց թագաւորութեան կործանումից յետոյ, երբ Պետրոս

Գետադարձ կաթուղիկոսը, որ դժբախտաբար շատ տխուր դեր էր կատարել Անի մայրաքաղաքը Յունաց ձեռքը յանձնելու մէջ և դորա համար առ-ժամանակ պատուի ու պարգևների արժանացել, Կ. Պոլիս կանչուեցաւ,—երկիւղ կրելով իրաւամբ, թէ մի գուցէ չթողնեն իրեն այլ ևս իւր հօտի մօտ վերադառնալ, 400 լիտր Միւռոն երկաթէ ամաններով թաղում է գիշերը *) Ահուր—Ախուրեան գետի յատակում, Անի քաղաքի մօտ, որպէսզի Յոյների ձեռքը չընկնի։ Այս զգուշութեան մի պատճառն այն կարող էր լինել, որ թէպէտ Գետադարձը իւր քրոջ որդի Խաչիկ Բ.-ին իւր փոխանորդ հայրապետ էր կարգել, բայց վախենում էր, որ Յունաց բռնութեան երեսից նա ևս չկարողանայ հայրապետական իշխանութիւն վարել ու ս. Միւռոն օրհնել, և Հայերը մնան առանց Միւռոնի. բայց պատմչի ակնարկած միւս պատճառն էլ այն էր երևի, որ Յոյները արհամարում էին Հայերի Միւռոնը, իբրև նոցա դաւանական խորութիւնը շեշտող մի գլխաւոր սրբութիւն, և եթէ ձեռք ձգէին, կանարգէին, կամ ոչնչացնելով՝ նեղ դրութեան մէջ կդնէին հայերին։ Այս հաստատում է նոյն Պետրոս կաթուղիկոսի կեանքի մի ուրիշ դիպուած, որ երբ Տրապիզոն էր գնացել Վասիլ Բ. կայսեր հետ տեսակցելու համար և Աստուածայայտնութեան տօնի օրը հրաման ստացաւ կայսրից ամենայն շքով Զրօրհնեաց հանդէսը

*) Մատթէոս Ուռհայեցի՝ Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898. եր. 104.

կատարել՝ ս. Միւռոնը ջրի մէջ կաթեցրած ժամանակ, ասուած է*), լուսոյ ճառագայթների մի ցնցուղ փայլատակեց շուրջը, որ տեսանելի էր ամբողջ բազմութեան։ Այս զրոյցը յետոյ աւելի ճոխացրած՝ պատմում են**), թէ ոչ միայն սաստիկ հուր ցոլաց ջրի վրայ, այլ և գետը մի վայրկեան կապուեց ու անշարժ մնաց՝ իբրև երկնային ապացոյց Հայոց Միւռոնի սրբութեան, որ Յոյները չընդունելով՝ կամենում էին նոցա Միւռոնով սրբուած ջուրը նորից օրհնել։

Նման մի նկատմամբ է անշուշտ, որ երբ ԺԲ. դարում Ներսէս Շնորհալու օրով միութեան խնդիր ծագեց Յոյների և Հայերի մէջ, Յունաց Մանուել կայսեր կողմից Հայոց կաթուղիկոսին եղած 9 առաջարկներից մէկն այն էր, որ Հայերը ս. Միւռոնը ծառերի պտղից եղած ձիթով պատրաստէին։ Ինչպէս ժամանակակից մեր եկեղեցւոյ հայրերը բացատրում են, Հայաստանում ձիթենու իւղ դժուարութեամբ ճարելը միայն պատճառ կարող է եղած լինել, որ նախընթաց խռովայոյզ ժամանակներում շատ անգամ հասարակ ձէթ է գործածուել, թէ չէ սովորականը և անպայման ընդունելին նաև Հայոց համար եղել է միշտ ձիթենու իւղը։ Այսպէս, երբ 1441 թուին հայրապետական աթոռը ս. Էջմիածին փոխադրուեց՝ այդ մեծ ձեռնարկութեան գլխաւոր հեղինակներից մէկը, Թովմա Մեծոփեցի վարդապետը, կի-

*) Արիստակէս վ. Լաստիվերցի՝ Պատմութիւն. Վենետիկ, 1901. եր. 19.

**) Ուռհայեցի. եր. 50.

լիկիայում գործադրուած զեղծումների թուում, որոնք պատճառ եղան Աթոռի փոխադրութեան, յիշում է մինչև իսկ, որ «Աստուածագործակ Միւռոնի» փոխարէն հասարակ ձիթապտղի ձէթ էին գործածում այնտեղ *), այսինքն Հայոց եկեղեցւոյ կանոնի համեմատ նոյն ձէթը անուշահոտ խունկերով ու ծաղկունքով չէին համեմում։ Ինչպէս ուրիշ եկեղեցական կարգեր, որ նախորդ դարերում Աթոռի ատաստանական և օտար ազգեցութեան ներքոյ լինելովը՝ մասամբ խանգարուել էին, և ս. Էջմիածին փոխադրուելուց յետոյ նախնեաց աւանդութեան համեմատ վերահաստատուեցան, և ապա անփոփոխ շարունակուեցին մինչև մեր օրերը, այդպէս է և ս. Միւռոնի օրհնութեան կարգը՝ ձիթենու իւղով և անուշահոտ իւղերի, խունկերի և ծաղկանց նիւթերի համեմունքով պատրաստելու հնաւանդ սովորութիւնը։ Մեծոփեցին մի շարք տեսիլներ պատմելով, որոնք իբրև գուշակութիւն էին նկատուում ս. Էջմիածնի հրաշալի վերանորոգութեան համար, յիշում է նաև մի բարեպաշտ հայի իրեն պատմած երազը, թէ ինչպէս տեսել էր իրեն ս. Էջմիածնի բեմի վրայ նստած, գոգը վարդով լիքը, և ամեն կողմից հայեր գալիս այդ վարդից վերցնում էին։ ապա ինքն էլ իսկոյն մեկնում է, թէ ս. Միւռոնն է այդ, որ ս. Էջմիածնից պիտի տարածուէր ամեն տեղ **)։

---

*) Թովմա Մեծոփեցու Ցիշատակարանը. Թիֆլիզ, 1892. եր. 56

**) Նոյն Ցիշատակարան. եր. 64.

Ցիրաւի, երբ Հայոց ազգի այս մեծերախտ վարդապետն իւր ընկերների հետ այնպէս զարմանալի կերպով յաջողեց Աթոռը ս. Էջմիածնում հաստատել և նոր հայրապետ ընտրել ու օծել Կիրակոս Վիրապեցուն, նոցա կարևորագոյն հոգսերից մէկը եղաւ՝ Հոգեգալստեան տօնին մեծահանդէս ժողովով ս. Մեսրոպն օրհնել և Հայաստանի բոլոր կողմերն ուղարկել, կանոն դնելով, որ այնուհետև ձրիաբար բաշխուի ամենուրեք ս. Մեսրոպը, հակառակ երևի Կիլիկիայում այս նկատմամբ մուտք գործած զեղծումների։

Թէպէտ Աթոռի փոխադրութիւնից յետոյ ս. Էջմիածինը շատ դառն և տագնապալից ժամանակներ անցկացրեց՝ արտաքուստ շարունակ ծանր բռնութեան, ճնշումների և կեղեքումների ենթակայ, ներքուստ խեղճ, անշուք և մշտակարօտ վիճակի մէջ, ունայն տենչերով միմեանց ձեռքից իշխանութիւն խլող և յաճախ մէկը միւսից աւելի ապիկար աթոռակալների խաղալիք, և մօտ երկու դար տևեց այդ թշուառ շրջանը. սակայն աշխարհի ամէն կողմերը ցրուած և շատ տեղեր Մ. Աթոռից աւելի ողորմելի դրութեան մէջ գտնուող Հայ ժողովրդի համար այնքան մխիթարական էր մտածել, որ իւր հոգևոր կեանքի մի կենտրոն ունի մայրենի հողի վերայ՝ նոյն տեղում, ուր ս. Լուսաւորիչ իւր առաքելական քարոզութեան և հայրապետական իշխանութեան հիմքը հաստատեց. այնքան ամուր էր հաւատը, թէ առկայծեալ պատրոյգը չպիտի շիջանէր և ջախջախեալ գաւազանը չպիտի խորտակուէր, — մինչ ընդ

հանրական հայրապետի բարոյական հեղինակութիւնը գնալով աւելի ու աւելի զօրացաւ և ս. Էջմիածնի անունը նուիրական դարձաւ ամբողջ հայութեան համար։ Մանաւանդ ԺԷ. և ԺԸ. դարերում, Մովսէս Տաթեւացի վերանորոգիչ հայրապետից սկսած, երբ Մ. Աթոռն իրօք նորոգուեց, շէնացաւ, կենդանացաւ, պայծառացաւ, դարձաւ լուսոյ և բարոյական վերածնութեան մայր հաւատարիմ հօտի համար. երբ մի շարք հոյակապ անձնաւորութիւններ յաջորդաբար հայրապետական Աթոռի վերայ բազմելով՝ միմեանց գերազանցել էին ձգտում իրենց շինարարութեամբ և Աթոռի ներքին բարեկարգութեամբ. երբ նոցա ուղարկած նուիրակները հասնում էին Սպահան, Հնդկաստան, Ղրիմ, Պոլիս, Լեհաստան, Իտալիա, Հոլանդիա, այդ տեղերում պատմական դժբաղդ պատահարների բերմունքով հաստատուած և նիւթական բարօրութեան հասած հայ գաղութներին՝ հայրապետական ողջոյն, Էջմիածնական սրբութիւնների օրհնութիւնը, ս. Միւռոն տանում, հայրենի աւերակների և նոցա շուրջը դեռ բնութեան ներքոյ հեծող ժողովրդեան արեան արցունքի պատմութիւնը, մայրենի հող ու ջրի կարօտը տանում, և բերում հետն առատ նիւթական ճոխութիւններ, քաղաքակիրթ աշխարհի նորութիւններ՝ նոր գաղափարներ և ձգտումներ, — ս. Էջմիածնի ու Հայրապետութեան վարկը իւր բարձրութեան գագաթնակէտին հասաւ, և նոքա դարձան ամէնքի համար գիտակցաբար սիրելի և պաշտելի մեծութիւններ. ս. Միւռոնն ևս, իբրև

նոցանից ընդունած ամենաթանկագին նուէրը, նոցա հետ ունեցած հոգևոր կապի ամենախոր-հրդաւոր միջնորդը՝ նոյնչափ աւելի յարգի ու նուիրական։

Իբրև նուիրակ և իբրև հայրապետ (1773—1780 թ.) մեր եկեղեցւոյ պատմութեան այս նշանաւոր շրջանի մի ամենարդիւնաշատ ներկայացուցիչն է յաւերժ յիշատակաց արժանի Սիմէոն Երևանցին, և շատ քչերն են եղել նորանից առաջ և նորանից յետոյ, որ ս. Էջմիածնի բարոյական մեծութեան, հայրապետական իշխանութեան վեհութեան և ս. Միւռոնի սրբութեան մասին այնպիսի բարձր գաղափար ունենային, ինչպէս նա, որի դեռ վարդապետութեան օրերից շատ ձեռագիր օրինակներով մնացած քարոզների մէջ գտնում ենք տաղանդաւոր և խիստ ոգևորեալ արտայայտութիւնն այդ գիտակցութեան։ Այդ քարոզներից մէկում, խօսելով ս. Գրիգոր Լուսաւորչի մասին՝ նա ասում է. «Այս ամենագովելի անձը այնքան առաջ գնաց իւր անօրինակ ճրգնութիւններով և անմարմնական վարքով, և այնպէս սիրելի ու հաճոյ եղաւ ամենագթած Աստուծուն, որ մի անգամ ընդհանուրի փրկութեան համար եկած Աստուծոյ Բանին իւր սիրովն ու աղօթքով կրկին անգամ իջեցրեց այս Այրարատեան երկրում, Վաղարշապատի դաշտում, Հայոց ընդհանուր՝ յատկապէս Հայոց ազգի համար... Եւ այստեղից կենդանարար ջուր և մշտահոս աղբիւր բղխեց՝ այսինքն ս. Հոգւոյ բազմապարգև շնորհքը, որ Աստուածագործ Միւռոնի միջոցաւ

բաշխուում է բոլոր եկեղեցիներին, և հաւատացեալների հոգիները նորանով ուռոգուած՝ պարարտանում ու պտուղ են տալիս»։—Ապա, ինչպէս Փրկիչը ս. Յովհաննէս Մկրտչի մասին հարցնում էր, ինքն էլ ս. Էջմիածնի մասին մի շարք հարցումներ է տալիս՝ ինչ տեսնելու էիք եկել, և իւր պատասխաններից մէկի մէջ ասում է. «Ցայտնի և անվիճելի է, որ ամէն օրէնք և կրօնք, ամէն կարգ ու շնորհաբաշխութիւն, ամէն հոգեշէն քարոզ և վարդապետութիւն ըղխում է Էջմիածնի այս սուրբ Աթոռից, ինչպէս աղբիւրից. և ապա տարածուում բաշխուում բոլոր եկեղեցիներին ու եկեղեցականներին՝ Քահանայապետի ձեռքով, որ բոլորի գլուխն է, և Աստուածազարդ սրբարար Միւռոնի շնորհքովը»։—Որպէս զի ս. Էջմիածնին նայողը՝ արտաքին խեղճութիւնից և պակասութիւններից սխալ գաղափար չկազմէ նորա ներքին արժանիքի մասին, ս. Գրքից վերցրած վկայութիւնը*) բացատրում է այսպէս. «Կեդարու վրանի նման սև է և տրտում (արտաքուստ՝ ս. Էջմիածինը), ժամանակի բերմանց հետևանօք, բայց ուրախ է և գեղեցիկ Սողոմոնի խորանից աւելի՝ իւր Աստուածազարդ կազմութեան և հոգևորական փառաւորութեան շնորհիւ»։—Իսկ ս. Միւռոնի համար ասում է. «Ինչպէս որ մարմնաւոր այգիներն ու պարտէզները ինչ որ ունին և առաջ են բերում՝ ջրով ուռոգուելուց է, այնպէս էլ բոլոր եկեղեցիներն ինչ որ ունին և առա-

*) Երգք 1, 4.

ջացնում են՝ ս. Միւռոնի ոռոգման շնորհիւ է, որ ս. Էջմիածնից է բղխում։»—Մի ուրիշ տեղ դարձեալ ս. Միւռոնի մասին աւելացնում է. «Քահանայապետական բոլոր սրբազնագործութիւնները Միւռոնով են կատարում ընդունում. ինչպէս եկեղեցի, սեղան, խաչ, քահանայ և ուրիշ եկեղեցական ամէն ինչ Միւռոնով է օծուում և սրբուում. այդ պատճառով և եկեղեցւոյ բոլոր խորհուրդների մէջ մկրտութիւնը և Միւռոնի օծումը գերագոյն են, իբրև մնացած բոլորի դուռ և ճանապարհ»։

---

Արարատեան երկրի և ս. Էջմիածնի Ռուսաց տիրապետութեան ներքոյ մտնելուց յետոյ՝ ընդհանուր ուխտագնացութեան հետ, յատկապէս ս. Միւռոնի օրհնութեան առթիւ Մ. Աթոռ ուխտի գալը բնականաբար շատ աւելի դիւրին դարձաւ, քան նախկին դարերում երբ և իցէ լինէր կարող էր. բարեխնամ կառավարութեան հովանու ներքոյ կատարեալ ապահովութիւն վայելող մեծ սրբավայրը սկսեց հետզհետէ աւելի ու աւելի մեծ և բազմերանգ բազմութիւն գրաւել իւր մօտ և Միւռոնօրհնութեան հանդէսը ստացաւ իրօք համազգային, խիստ մեծաշուք բնաւորութիւն։ Մեր ժողովրդի մէջ տարածուած է այն կարծիքը, թէ մեզանում ս. Միւռոն օրհնուում է 7 տարին մի անգամ. բայց իրօք միւռոնօրհնութիւն տեղի է ունենում պէտքի համեմատ՝ սովորաբար 4—5 տարին մի անգամ. թէպէտ հանգամանքների շնոր-

հիւ այս ժամանակամիջոցը երբեմն նոյն իսկ եօթ տարուց աւելի է տևել։ Վերջին ժամանակ՝ երջանկայիշատակ Գէորգ Դ.-ի հայրապետութիւնից սկսած, ս. Միւռոնն օրհնուել է 1868, 1872, 1878, 1882 թուականներին Տ. Տ. Գէորգ Դ.-ի, 1886 և 1890 թուականներին Տ. Տ. Մակար կաթուղիկոսի, 1897 և 1903 թուականներին Տ. Տ. Մկրտիչ կաթուղիկոսի ձեռքով. իսկ Հոգելոյս Տ. Տ. Մատթէոս Բ.-ի անակնկալ վախճանը արգելք եղաւ իւր մտադրութիւնն իրագործելու և անցեալ 1911 թ.-ի դարնան ս. Միւռոն օրհնելու, որի համար արդէն սկսուած էր պատրաստութիւն տեսնել։ Յիշեալ բոլոր միւռոնօրհնութեանց հանդէսները աւելի կամ պակաս մանրամասնութեամբ նկարագրուած են նոյն թուականների «Արարատ»ի մէջ, շատերը նաև ուրիշ պարբերական հրատարակութիւններում *)։ Առանձնապէս բազմամարդ են եղել և հանդիսաւոր 1872, 1882 և 1890 թուականների միւռոնօրհնութիւնները։ 1878 թուին, նախընթաց ռուս-

*) 1882 թուի հանդիսի նկարագրութիւնը տես. «Արձագանք» № 15, եր. 225. Ըրբ. Եյվազեանի յօդուածում նոյն թուականի № 13-ում, եր. 193, մի ուշագրաւ յօդուածունի «ս. Միւռոնի օրհնութեան» մասին յայտնի հնախօս Ա. Երեցեանը՝ «Համբօ» ստորագրութեամբ։ Մի ուրիշ յօդուած գրել է նա 1890 թուի միւռոնօրհնութեան առթիւ նոյն թուականի «Արձագանք»ի № 29-ում։ Նախկին հանդէսներից 8. 8. Ներսէս Ե. Աշտարակեցու՝ իւր օծման տարին, 1846 ին, կատարած միւռոնօրհնութիւնը նկարագրել է տկանատես Մուրավիովը Грузія и Армеція գրքում. С. П. Б. 1848, часть II. стр. 192—202.

տաճկական պատերազմի հետևանքով՝ առաջուց հրաւէրներ չեն ուղարկուել հեռու տեղեր, ինչպէս սովորութիւն է. ուստի հանդիսին մասնակցել են միայն շրջակայքի և մօտիկ տեղերի բնակիչները։ Նոյնը եղաւ նաև 1897 թուին, որովհետև նախորդ 1896 թ.-ի սեպտեմբերի համար առաջուց յայտարարած հանդէսը տեղի չունեցաւ՝ Տաճկահայաստանում շարունակուող կոտորածների և յարակից սգաբեր հանգամանքների շնորհիւ. իսկ 1897 թուին Մ. Աթոռում նորոգութիւններ էին կատարում. ենթադրուում էր, որ եթէ վաղօրօք յայտարարուի միւռոնօրհնութեան մասին՝ հնար չի լինի ժողովուած բազմութեանը տեղաւորել։ Սակայն՝ մինչ նոյն թուականի «Արարատ»ի օգոստոս տետրակում (եր. 368) ս. Միւռոնի կաթսան Մայր Տաճարի սեղանի վրայ դնելու առթիւ, 40 օր յետոյ՝ սեպտ. 14-ին, Խաչվերացի տօնի օրը կատարուելիք միւռոնօրհնութեան մասին ծանուցանելիս՝ յոյս է յայտնուում, թէ 1902 թուին, ս. Էջմիածնի հիմնարկութեան 1600-ամեակը տօնելու հետ՝ պատշաճագոյն հանդիսաւորութեամբ ս. Միւռոն կօրհնուի, և ջերմեռանդ ուխտաւորներ վաղօրօք կհրաւիրուեն՝ հազարաւորներով ժողովուել վերանորոգուած ս. Էջմիածնի սրահներում, դժբաղդաբար այդ տարին կարելի չեղաւ ս. Միւռոն օրհնել, և յաջորդ 1903 թուին, կալուածների գրաւումից յետոյ՝ շատ յարգելի պատճառներ ստիպեցին միւռոնօրհնութիւն կատարել յանկարծակի և բոլորովին առանձին կերպով։ Եւ ահա այնուհետև 9 տարի է անցել, որ նոր Միւռոն

չի օրհնուել. մի ժամանակամիջոց, որի նման երկարը միւռոնօրհնութիւնների մէջ անցեալում էլ երևի շատ քիչ անգամ պատահած կլինի։ Իսկ եթէ ի նկատի ունենանք, որ նախորդ երկու միւռոնօրհնութիւններին ևս հեռաւոր հայեր հնարաւորութիւն չեն ունեցել ներկայ գտնուելու, կհետևի, որ 1890 թուից ի վեր՝ այս 22 տարուայ ընթացքում, առող մի ամբողջ սերունդ կարօտ է մնացել հայրենաւանդ մեծ հանդիսին։ Ընդհակառակն՝ նոյն այս վերջին ժամանակաշրջանում հայաբնակ վայրերի հաղորդակցութիւնը Մ. Աթոռի հետ անհամեմատ չափով հեշտացել է. ոչ միայն Ռուսաստանում և քաղաքակրթեալ աշխարհում ապրողներ, այլ Տաճկաստանի և Պարսկաստանի հայերն ևս վերջին տարիներս ամէն դիւրութիւն ունին ուխտի գալու ս. Էջմիածին։ Ուստի պէտք է ասասել, որ առաջիկայ միւռոնօրհնութիւնը մի արտաքոյ կարգի հանդէս կլինի հեռու և մօտիկ տեղերից ի մի խնուած բազմերանդ հայութեան, և յուսալ, որ նախնեաց բարեպաշտութիւնն ու ջերմեռանդ սէրը դէպի Մ. Աթոռ նորոգ կենդանութիւն պէտք է գտնէ և անջնջելի յիշատակ թողնէ այդ ուխտաւոր բազմութեան սրտերում։

Անշուշտ միայն մի փոքր մասն այդ բազմութեան բաղդ պիտի ունենայ տեղ գտնելու Մ. Տաճարում և ի մօտոյ տեսնելու հանդէսը. մինչդեռ բոլորիքեան կցանկանային իմանալ, թէ ինչպէս է պատրաստուում ս. Միւռոնը և ինչպէս կատարուում հանդէսը։ Փորձենք համառօտօրէն կարագրել։

Մ. Աթոռի մատենադարանում միւռոնօրհնութեան կարգը միայն 6 ձեռագիր մաշտոցների մէջ գտանք, որոնք, գրուած լինելով ԺԳ—ԺԸ դարերում՝ գրեթէ բոլորովին նոյնութեամբ են առաջ բերում բոլոր խրատներն ու ընթերցուածները, ինչ որ 1876 թուին ս. Էջմիածնում տըպուած և ներկայումս գործածական օրինակը: Միայն նորագոյն, 1721 թուին Երուսաղէմում ընդօրինակուած՝ ձեռագրի մէջ (№ 976) Մարկ. 14, 3—9 Աւետարանից յետոյ ս. Աթանասի անունով մի աղօթք կայ աւելի, որի կողքից Տ. Տ. Գէորգ Դ. իւր ձեռքով գծել է և լուսանցքում դիտել, թէ չպիտի կարդացուի: Իսկ հնագոյն ԺԳ. դարի ձեռագրում (№ 959) բացի այժմեան գործածականից գտնում ենք նաև մի ուրիշ համառօտ կարգի հատուած, որ թերևս գործածական է եղել նախկին դարերում: Յամենայն դէպս կարելի է վստահութեամբ ասել, որ գոնէ ԺԳ. դարից այս կողմ նոյնութեամբ պահուել է այժմեան կարգը: Յիշածս 6 ձեռագրերից միայն 4-ի մէջ կայ այն նիւթերի ցանկը, որոնք խառնուում են ձիթենու իւղի հետ ս. Միւռոն պատրաստելու համար, և այդ ցուցակը բոլորի մէջ գրեթէ նոյնն է, նոյն դասաւորութեամբ, միայն տառական տարբերութիւններով.

Ահա այդ ցուցակը՝

1. Պալասանի փայտ ու հունտ խասապտրիբէ ա. թուխտ.
2. Մնպուլ . . . նուկի և կէս

3. Խարանաֆուլ . . »
4. Ճօսպէ . . . . »
5. Բաղապէ . . . »
6. Պասպասէ . . . »
7. Սատէճ Հնդի . . ա. Թուխտ.
8. Դարսենի . . . Նուկի
9. Ջնճպիլ . . . »
10. Մազդաքէ . . . »
11. Հայ խունկ . . . »
12. Լատան . . . »
13. Միխոտայիլէ . . . ա. Թուխտ.
14. Հոռոմ խունկ . . Նուկի
15. Խաւրտաւմանայ . . ա. Թուխտ.
16. Ըստորք խունկ . . »
17. Ծխանելիք՝ մուխասարի սանդալ ա. Թուխտ.
18. Զաֆրան . . . »
19. Մարտակուշ . . . Նուկի
20. Պլուկ վարդ . . . »
21. Մանլուպ . . . »
22. Աթխոր . . . »
23. Կիպեռիս . . . »
24. Ասարոն . . . »
25. Պապունիճ . . . »
26. Մանուշակ . . . »
27. Վարդ . . . . »
28. Նունոֆար . . . »
29. Նարինճի ծաղիկ . . »
30. Կասլի տերև . . . »
31. Նումայի ծաղիկ . . »
32. Մրաենի . . . »

33. Վարդի ջուր . . . . ա. լիտր.
34. Գինի . . . . նուկի
35. Մուշկ . . . . } նուկի
36. Ամպար . . . . }
37. Նոճէս . . . . } նուկի
38. Ճապուռ . . . . }

Ա. Երիցեան վերև ակնարկած յօդուածում* առաջ է բերում, թէ ասելով մի հին ձեռագրից արտագրած՝ 45 անուն նիւթերի ցուցակ, որի մէջ մտնում են մեր այս ցուցակի գրեթէ բոլոր նիւթերը, մի քանիսը միայն փոքր ինչ տարբեր, երբեմն դուցէ թիւմացութեամբ փոխած, մէկը երկու դարձրած՝ անուններով, կամ նոյն նիւթի տարբեր տեսակներով։ Այսպէս՝ վերևի ցուցակի 3 տեսակ խունկի փոխարէն միայն մի պարզ խունկ է յիշած. մի տարուի փոխարէն 2 տեսակ՝ Հնդի և խաթայի. գալասան՝ յուռ, հապ և հեղուկ. պղուկ վարդի՝ ոչ՝ գոլարդ. գինի, մրտենի և ճապուռ չեն յիշուած, բայց դորա փոխարէն՝ դասապզարիէ, բալսամ Մարիամ, ֆլֆուլ, հապղղար, իրֆիսելմէբէ, նարնջի ծաղկի ջուր։

Այժմեան գրածաձևան կանոնը՝ վերոյիշեալ տպագրութեամբ այդ անուններից շատերը հայացնելով կամ բացատրելով, նիւթերը տեսակաւորելով և մի քանիսն աւելացնելով՝ տալիս է հետևեալ ցուցակը.

1. Յուռ Պալասան, այսինքն Պալասան Հրէաստանի, կամ Պալասան Եգիպտոսի (Մեքկէ փէլէլէսէնկի, կամ Եահուտի փէլէսէնկի) . . 20 տրամ

*) Արձագանք, 1882, № 13, եր. 194 շ.

2. Հայ Պալասան. Պալասան Պերուի, որ է հունտ (Եէնի Տիւնիա փէլէ-սէնկի թօհումու) . . 10 »
3. Մեխակ (Գարանֆիլ) . . » »
4. Ընկոյզ Հնդկաց, կամ ճավուզ Պուա (Հինտիստան ճէվիզի) . » »
5. Խնկեղէն (Ղասապ զարիէ) . » »
6. Նարդոս Հնդի (Սիւմպիւլի Հինտի) » »
7. Պղպեղ Յաւայի (Բէպապիէ) . » »
8. Շամբալեղակ, կամ սամիթ յունական. Պասպասա բումի (Պոյթօհումու) » »
9. Մաղարատրոն (Սաղէճ Հնտի) 20 տրամ
10. Դարեսենիկ կամ կինամոն (Տարչին) 10 »
11. Խունկ (Բիւնիւկ) . . » »
12. Հիլ, կամ զրտիմանէ (Գագուլէ) 20 »
13. Սատրաքս (Պուհուր Մէրիէմ) . 10 »
14. Սորեակ հլատ (ճաւր հնտի) . » »
15. Սանտալ սպիտակ, կամ Սանտալ ապենար (Սանտալ) . . 20 »
16. Ջուր յասմիկ և այլ ծաղկանց, կամ միեասյիլէ (չիչէք սույի) . » »
17. Բրքում (Զաֆրան) . . » »
18. Մարգակուշ. որոյ պտուղն է հոտաւէտ (Մէրզէնկուշ) . . » »
19. Մանլապ. որ է ազգ ինչ քրքմոյ (Մէլապ) . . . . 10 »
20. Վաղամեռուկ (Իթիրիէ Մէքէ) 20 »
21. Կիպարիս, կամ Սատիքօնի (Սիւյիւտ քիւհի) . . . . 10 »
22. Ասարիոն (Էզարուն) . . » »

23. Զրվարդ, կամ պլպլուկ վարդ (Եապանի կիւլ) . . . . 40 »
24. Երիցուկ, կամ Պապունաճ (Փափաթիա չիչէյի) . . . . 40 »
25. Մանուշակ, կամ Պենեֆշէ (Մէնէքշէ) 120 »
26. Կոկոռի կամ Նոնոֆարի ծաղիկ (իւլուֆէր կամ նինէֆէր չիչէյի) » »
27. Նարնջի ծաղիկ (Թուրունճ չիչէյի) 40 »
28. Պղպեղ սպիտակ (Ֆլֆիւլ) . 10 »
29. Վայրի կակաչի տերև, կամ կասլի տերև (Նիւմա կամ կիլէնճիկ-չիչէյի եափրաղը) . . . 40 »
30. Վայրի կակաչի ծաղիկ, կամ կասլի ծաղիկ (Նիւման, կամ կիլէնճիկ չիչէյի) . . . . 30 »
31. Մրտենուոյ տերև (Մէրսին աղաճը եափրաղը) . . . 40 »
32. Նարկիզ, կամ Նրճէս (Նարկիւզ) » »
33. Պտուղ դափնուոյ, կամ Հապլղար (Թէֆնէ թոհումու) . . 20 »
34. Լատէն (Աֆիոն բուհու) . . 10 »
35. Կոճապղպեղ (Զէնճէֆիլ) . » »
36. Մաստակի (Սաքզ) . . 20 »
37. Յուտ, որ է ծխանելիք (իւտ կամ էօտ աղաճը) . . . . » »
38. Պալասան, որ է հեղուկ (փէլէսէնկ) 120 »
39. Ամպար (Ամպէր) . . . 5 »
40. Մուշկ (Միսք) . . . » »
41. Նարդոս խաթայի (Սիմպիւլի Խիթայի) 10 »
42. Արմատ Մանուշակի (Մէնէքշէ քեօքիւ) » »
43. Մատուտակ, կամ Հոռոմ խունկ (Միա) 20 »

44. Նարնջի ծաղկի ջուր (Թուրունջ չի-
չեյի սույու) . . . » »
45. Վարդեջուր (Կիւլ սույու) . 50 »
46. Օշշի ծաղիկ (աւելացրած տպագրի
վերայ) . . . . 40 »

Այս նիւթերը, որ՝ ինչպէս անուններից երևում է, անուշահոտ խնկեղէն, ծաղիկներ և ծաղկաջրեր, անուշաբոյր բոյսերի արմատներ, իւղային հիւթեր և տերևներ են, մեծ մասամբ կարելի էր նաև մեր երկրում գտնել կամ պատրաստել, բայց վերջին ժամանակներս սովորութիւն է դարձել գրեթէ բոլորը Պարսկա-Հնդկաստանի առաջնորդի միջոցաւ Հնդկաստանից բերել տալ։ Ինչպէս տպագրեալ կանոնի մէջ շեշտուած է, անհրաժեշտ չէ ի հարկի, որ ս. Միւռոն պատրաստելու համար այս բոլոր նիւթերը լինին. վերև բերած համեմատութիւններից էլ երևում է, որ երկրորդականները նոցա մէջ գտնական ժամանակ աւելացել ու պակասել են։ Ռուսաց եկեղեցին այժմ բացի ձիթենու իւղից և սպիտակ գինուց՝ գործ է ածում 31 տեսակ նիւթ, որոնցից 2 դար առաջ միայն 27 տեսակ է եղել և որոնց մեծագոյն մասը մտնում է մեր ցուցակների մէջ։ Ս. Միւռոնի ամենակարևոր տարրը այս նիւթերից, թէ մեր և թէ ուրիշ եկեղեցիների համար, պալասանն է՝ փշատանման մի ծառի կեղևի տակից ծորող անուշահոտ հեղուկ, որ առաջ Պաղեստինից բերածն էր միայն գործածուում, իսկ ԺԴ. դարից սկսեցին գործածել նաև Հնդկաստանից բերած աւելի անուշաբոյրը։ Պալասանը

պահանջում է նաև մասնաւոր խնամքով պատ-
բաստութիւն։ Առաջուց կոտաւատի մաքուր ձէթի
մէջ լուծում են այն և մի փոքր կաթսայի մէջ
եռ տալիս. միևնոյն ժամանակ մի ուրիշ փոքր
կաթսայի մէջ եռ են տալիս ձիթենու մաքուր
իւղը, և այդպէս տաք տաք երկուսը խառնում,
որպէս զի զանգուին, յետոյ ձիթենու իւղի մեծ
կաթսայի մէջ թափած ժամանակ՝ պալասանը
չգնայ տակը նստի։ Այդպէս առանձին պահում
են մինչև միւռոնօրհնութեան օրը։ Միւս նիւթերն
ևս, որը կոշտ է՝ առաջ լաւ, ծեծում մանրում և մա-
ղում են. վերցնում են ապա մի չափաւոր կաթ-
սայ, ներսից խմորով ծեփում, մէջը ձիթենու
իւղ և գինի ածում, յետոյ բոլոր պատրաստած
նիւթերը (բացի պալասանը), և բերանը ծածկում։
Այսպէս եփում են, և երբ սկսում է եռ գալ,
կրակը պակասեցնում են և շարունակում երկու
օր ու գիշեր եփել մեղմ կրակի վերայ՝ երբեմ-
նակի խառնելով, որպէս զի չկպչի տակից։ Յետոյ
վերցնում են կրակից և երկու օր թողնում, մինչև
լաւ պարզի. ապա մաքուր կտաւներով քամում
են և դարձեալ առանձին անօթի մէջ պահում, մինչև
միւռոնօրհնութեան օրը։ Այս բոլորը կատարում է
Հայրապետի հրամանով Մ. Աթոռի աւագ լուսա-
բարը իւր օգնականների հետ։

Ջեռագիր մաշտոցներում միւռոնօրհնու-
թեան համար որոշուած օրը աւագ հինգշաբթին է,
ինչպէս սովորութիւն էր դարձել կատարել ա-
ռևելքում է. դարից սկսած. ինչպէս մինչև այժմ
կատարում է Ռուսաց եկեղեցին (2—4 տարին մի

անգամ՝ Մոսկուայում և Կիևում)։ Առաջ այդ-
պիսի որոշ օր չի եղել և վերջին դարերում մեր
մէջ դարձեալ յարմարութեանը նայած զանազան
մեծ տօներին է կատարուում՝ Հոգեգալստեանը,
ս. Էջմիածնի տօնին, և ամէնից աւելի Վարագայ
ս. Խաչին, որ ս. Էջմիածին երթևեկելու համար
տարուայ ամենայարմար ժամանակն է ընկնում։
Սահմանուած օրից ուղիղ 40 օր առաջ ս. Միւ-
ռոնի կաթսան մաքուր ձիթենու իւղով լի դըր-
ուում է Մ. Տաճարի աւագ սեղանի վերայ՝ խաչա-
ծայր կափարիչով և 7 շար ծածկոցով ծածկած,
և Մ. Աթոռի միաբանութիւնը իւրաքանչիւր օր
երեկոյեան ժամերգութիւնից յետոյ պաշտօն է
կատարում. այսինքն՝ երգուում է ս. Միւռոնի յա-
տուկ շարականը (Որ յառաջագոյն), կամ մի մի
Հոգեգալստեան շարական, սեղանից կաթսայի
վերայ պատշաճ աւետարան է կարդացուում,
ապա ս. Հոգւոյ քարոզ և աղօթք։ Իսկ միւռո-
նօրհնութեան օրուայ նախատօնակի գիշերը հըս-
կումն է կատարուում։ Ապա որոշուած օրը, ս.
պատարագից առաջ, եթէ Վեհ Հայրապետն ինքն
է պատարագիչը, ինչպէս սովորաբար լինում է
(բացի այն դէպքերից, երբ չափազանց ծերու-
թեան պատճառով դժուարանում է պատարագել),
զգեստաւորուում է վեհարանում կամ աւանդա-
տանը. հետն զգեստաւորուում են 12 եպիսկո-
պոսներ, որոնցից իւրաքանչիւրը մի մի սրբու-
թիւն ձեռքում բռնած՝ կանգնում են Նորին Վե-
հափառութեան աջ և ձախ կողմերում. Վեհ. Հայ-
րապետի ձեռքին լինում է խաչ և գաւազան. մի

կողմ 6 եպիսկոպոսների ձեռքին ս. Գեղարդը, ս. Թովմա առաքեալի աջը, ս. Պետրոս առաքեալի մասունքը, ս. Յակովբ Ալփեայի աջը, ս. Մատթէոս աւետարանչի մասունքը և միւռոնակիր աղաւնին. միւս կողմի 6 եպիսկոպոսների ձեռքին՝ Գենաց ս. Նշանի ճաճանչաւոր խաչը, ս. Լուսաւորչի աջը, Պետրոս Գետադարձ Հայրապետի քառաթև խաչը, ս. Յակովբ Մծբնայ հայրապետի աջը, ս. Արիստակէս հայրապետի աջը և ս. Աւետարանը։ Այսպէս խաչ ու խաչվառով, մոմերով, քշոցներով և բուվառներով թափօր կազմած առաջ են շարժուում՝ Վեհ. Հայրապետը ամպհովանու տակ (եթէ վեհարանից է գալիս թափօրը), առջևից Հայրապետական քօղը՝ «Խորհուրդ խորին» երգելով մինչև աւագ սեղանի առաջ, ուր սկսուում է ըստ սովորականին ս. պատարագը։ Պատարագի ժամանակ երեք եպիսկոպոսներ կարգաւ վերաբերում ու կարգում են Աւետարանը, ասում «Հաւատամքը». իսկ երբ «Սաղմոս ասացէք» երգուում է, պատարագիչ ս. Հայրապետը նստում է աթոռի վերայ, երեսը դէպի ժողովուրդը դարձրած, և նոյն երեք եպիսկոպոսները յառաջանում են դէպի հիւսիսային խորանը, ուր առանձին սեղանի վերայ առաջուց դրած են լինում ս. Հաղորդութեան ընծայից սկիհը, հին Միւռոնը և նոր Միւռոնի պատրաստի նիւթերը պարունակող անօթները։ Երկու եպիսկոպոսներ իրենց ձեռքն առնելով հին Միւռոնի անօթն ու նոր Միւռոնի նիւթը, զուգընթացաբար շարժուում են՝ առջևից բուրվառակիր սարկաւագներ,

ետևից կերոնակիրներ և լապտերակիրներ, յետոյ դարձեալ բուրվառակիրներ. ապա վերաբերում անող եպիսկոպոսը՝ ետևից քշոցաւորներ. գալիս են թափօրով այսպէս դէպի ս. Ստեփանոսի սեղանը, ուր կանգ են առնում. ապա կրկին կանգ են առնում արևմտեան կողմում, ս. Յովհաննու Մկրտչի սեղանի առաջ և հարաւային կողմում. և ամէն անգամ առաջուց պատրաստած սեղան է լինում, որի վրայ դնում են հին Միւռոնի և նորի նիւթերի անօթները. իսկ դպրաց դասը շարունակաբար երգում է վերաբերման Սաղմոսը (Յարևու եհար են.)։ Երբ բարձրանում են սեղանը, մօտենում է բուրվառով պատարագիչ ս. Հայրապետը, վերաբերիչ եպիսկոպոսը բարձրաձայն ասում է «Համբարձէք իշխանք» սաղմոսը, և այսպէս ըստ կարգին լրացու

մէկը կարդում է Միւռոնի նիւթի «երդմնեցու-
ցման» բանաձևը, և ս. Հայրապետը կարդում է
ս. Գրքի վկայութիւններով ս. Միւռոնի նշանա-
կութիւնը պարզաբանող և խնդրուածներով կնքող
երկար աղօթքը։

Այս աղօթքի վերջում ս. Միւռոնի կաթսայի
կափարիչը վերցուում է, և մինչ դպիրները շա-
րական են երգում՝ ս. Հայրապետը թափում է
կաթսայի մէջ ծաղիկներով և այլ անուշահոտ
համեմունքներով պատրաստած նիւթը, ապա և
պալասանը. ապա հին Միւռոնը ձեռքն է առ-
նում և «Առաքելոյ աղաւնոյ» երգելով թափում
դարձեալ կաթսայի մէջ։ Յետոյ վերցնում է կե-
նաց ս. Նշանը՝ «Օրհնեսցի և Սրբեսցի» ասելով
և տեառնագրելով՝ խառնում է Միւռոնը. ապա
նոյն կերպ տեառնագրում և խառնում է ս. Գե-
ղարդին ու ս. Լուսաւորչի աջով. իսկ «օրհնու-
թիւնը» երգուելուց յետոյ կաթսան ծածկում
են կափարիչով և ծածկոցով, ս. Հայրապետը
կարդում է մի քանի համառօտ աղօթքներ, եպիս-
կոպոսներից մէկն աւետարան է կարդում. վեր-
ջում «Ս. խաչիւս» են ասում, ս. Հայրապետը
«Պահպանիչով» փակում է հանդէսը, և «Ողջոյն»
տալով շարունակում են պատարագը։

Թէպէտ եկեղեցւոյ և՛ դուրսը և՛ ներսը խիստ
կարգապահութեան համար ամեն միջոց ձեռք
առնուած է լինում, բայց այս խորհրդաւոր ըո-
պէին, երբ միւռոնօրհնութեան բուն արարողու-
թիւնն աւարտուում է՝ շատ դժուար է պահել ջեր-
մեռանդ ժողովրդեան առաջը, որ ս. Միւռոնի

կաթսան «տաք տաք» համբուրելու ջերմ փափագով յորձանք է տալիս, առաջ շարժուում, և քիչ չեն պատահում դէպքեր, երբ մէկը կամ միւսը բուռն կրօնական ոգևորութեամբ տարուած, ամէն ինչ մոռացած և ամէն արգելքների յաղթելով՝ պահապան զինուորների սուինների վերայով դէպի սեղանն է նետուում և ս. Միւռոնի կաթսային փարուում։ Իսկապէս ս. Պատարագիչ յետոյ է սկսուում ժողովրդեան գունտագունտ դիմումը կաթսան համբուրելու համար, և այն մի քանի օրը, որ շարունակում է համբուրելը, կաթսան մնում է ի հարկէ սեղանի վերայ։

Ի՞նչ տպաւորութիւններ և ի՞նչ զգացումներ է տանում այնուհետև ուխտաւոր բազմութիւնը Մ. Աթոռից։—Երջանկայիշատակ Սիմէոն կաթուղիկոսը, որի մի քանի ասացուածքները վերև առաջ բերինք, այդ բազմութեանը դիմելով և իւր խօսքն ընդհանրացնելով՝ բացականչում է. «Ո՛վ ամենայն եկեղեցիք և եկեղեցականներ, ճանաչեցէք թագուհիների միակ թագուհի ս. Էջմիածինը, որ Հայոց ազգի Աթոռն է և Քրիստոսի յատուկ սիրելին. որի նմանը ուրիշ ազգեր չունին, որին երանի են տալիս և գովում, որին կարօտում են և տենչալ ցանկանում... Տեսէք և ճանաչեցէք կենդանի ջրոյ միակ աղբիւր և ջրհոր ս. Էջմիածինը, որ անա բաշխում է ձեզ, յոռոգումն հոգևոր, կենդանարար ջուրը՝ սուրբ Միւռոնը։ Այն խորհրդաւոր արեգակն է և Էջմիածինը, որ առատապէս ճառագայթում է դէպի ձեզ աստուածային լոյսը՝ սուրբ Միւռոնը, որ ձեր հոգին ու մարմինը

պիտի լուսաւորէ։ Վայելեցէք ուրեմն, շնորհակալ եղէք և իմացէք, թէ ումից էք ստանում այդ շնորհը»։—Դժբախտաբար նոյն վստահութեամբ և նոյն պարծանքով խօսել մենք այսօր այլևս չենք կարող։ Սիմէոն Երևանցու օրով այնքան մեծ էր իրօք Մ. Աթոռի կատարած կենդանարար և լուսատու դերը հայ ժողովրդեան վերաբերմամբ. ինքը բազմերախտ Հայրապետը մանուկ հասակից սնուած և կրթուած լինելով նոյն Աթոռի հովանու ներքոյ, ամբողջ կեանքը նորա շենութեանն ու պայծառութեանը նուիրած՝ այնպիսի ջերմ հաւատ ունի դէպի նորա երկնատուր կոչումը, և մահմեդական ազգերով շրջապատուած, ասիական թանձր խաւարի մէջ կորած մի մթնոլորտում այնքան զգալի էր քրիստոնէի համար նորա հոգևոր գերազանցութիւնը, որ վերև բերուած խօսքերը պէտք է համարուին հեղինակի անկեղծ զգացման և համոզման արտայայտութիւններ։ Սակայն դարուկէս ժամանակ է անցել այդ օրից և մեզ բերել շատ դառն փորձեր, մեզ համեստ ու նկուն դարձնող բազմադիմի ծանօթութիւններ։ Մեր առջև մի ընդարձակ քաղաքակիրթ քրիստոնեայ աշխարհ կայ՝ կենդանութեան և լուսաւորութեան այնպիսի փառաշուք կենտրոններով, որ եթէ մենք վստահանայինք իսկ նոցա հանդէպ բերել մեր հոգևոր կեանքի կենտրոնը և պարծենալ սորա պատկառելի հնութեամբ, Աստուածահիմն հաստատութեամբ և անցեալ փառքով, սուր պատասխան կստանայինք անշուշտ. իսկ դուք, նոր ժամանակի սերունդներդ, որչափ արժանաւոր

ժառանգներ էք արդեօք ձեզ աւանդած բարեաց ինչպէս էք գնահատում և ինչ միջոցներով ներգործական դարձնում նոցա հոգևոր ոյժը. ինչքան պայծառ էք պահում արտաքուստ և կենդանի ներքուստ ձեր հայրենի տունը։ Եւ ափիբերան պիտի ճնայինք մենք։ Եւ թողնելով, որ իւրաքանչիւր քրիստոնեայ ժողովուրդ իւր ազգային սրբութիւններին դերազոյն արժանիք վերագրէ և պատշաճաւոր յարգն ընծայէ նոցա, դառնայինք և մեր փառապանծ ժառանգութեան բաղդատմամբ մեր անպարտաճանաչ խեղճութիւնը սգայինք. բայց և նոր ոգի ու նոր եռանդ ստանայինք, հակառակ մեր ապաշնորհութեան՝ Մեծ Լուսաւորչի և մեր երջանիկ նախնեաց անդուլ աղօթքի և անսպառ երախտեաց շնորհիւ դեռ կանգուն և միշտ հաստատ տեսնելով Մ. Աթոռը, նորոգ օրհնութեամբ սրբալոյս Միւռոնի միշտ կենդանի և կենդանարար շնորհաբաշխ ս. Հոգին քրիստոնեայ հայութեան մէջ. ձայնէինք միմեանց, և դարէ ի դար հնչող այս ձայնը արձագանք տար հայ սրտերում. եկէք, եղբարք, չէն վառ պահենք լուսոյ այս սուրբ խորանը, որ այստեղից ծագէ միշտ լոյս մեր Հայաստան աշխարհին։

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՄՍՕՐ